ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/225

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ
Մասնակից՝ «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցում, Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար 2019 թվականի սննդամթերքի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19606-2019 գրությամբ «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 21.11.2019թ. գրության հիման վրա, 27.11.2019թ.-ին «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 27.11.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 04.12.2019թ.-ին և 10.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

<u>«Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 21.11.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում՝ «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի միջև 08 հունվար 2019 թվականին կնքվել է «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» ծածկագրով պայմանագիր:

Ըստ որի «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ն պարտավորվել է իրականացնել յուրաքանչյուր աշխատանքային օր սննդամթերքի /հացի/ մատակարարում:

Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 1 435 000 /մեկ միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

Պայմանագրի կատարման փուլում ի հայտ են եկել բազմաթիվ անգամ խոչընդոտներ՝ հացի մատակարարման ուշացման, հացի որակի անհամապատասխանության , որի համար բանավոր բազմաթիվ զգուշացումներ են արվել:

18.11.2019 թվականին «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ն ընդհանրապես չի իրականացրել հացի մատակակարում, որի արդյունքում խաթարվել են մանկապարտեզի աշխատանքները:

18.11.2019 թվականին «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում պահանջելով պարզաբանում հացի չմատակարարաման համար:

19.11.2019 թվականին «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ն առանց հանձման-ընդունման արձանագրության առանց ուղեկցող փաստաթղթի իրականացրել է հացի մատակարարում, որը չի ընդունվել «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից և գրությամբ տեղեկացվել է:

«Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ն բազմաթիվ անգամ խախտել է պայմանագրի 1.1 կետը:

19.11.2019 թվականին «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի միջև 08 հունվար 2019 թվականին կնքված «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» ծածկագրով պայմանագրի 8.11 կետով միակողմանի լուծել պայմանագիրը և միաժամանակ հրապարակվել ֆինանսների նախարարության www.gnumner.am կայքի պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում:

Ի հայտ են եկել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի ա) պարբերության հանգամանքներ:

Խնդրում ենք նախաձեռնել ընթացակարգ «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

2. <u>«Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.12.2019թ.-ի գրությամբ դիմել է «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.11.2019թ.-

ի թիվ 26/26-1/19606-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին և ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

«"Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2019/225 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

"Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ" ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու կամ գնորդ) և "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ վաճառող) միջև 2019թ. հունվարի 08-ին կնքվել է "ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4" ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Պայմանագրի՝

1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2.1-րդ կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի՝

2.1.1-րդ կետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

2.1.2-րդ կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3-րդ կետի համաձայն՝ եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4-րդ կետի համաձայն՝ եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհապույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.7-րդ կետի համաձայն՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1-րդ կետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _1_օրից ավելի:

8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի "Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները" բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշված պայմանագիրը "Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ" ՀՈԱԿ-ի կողմից 19.11.2019թ. գրությամբ միակողմանի լուծվել է: Լուծման գրությամբ նշվել է հետևյալը. "18.11.2019թ. "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել հացի

մատակարարումը: 19.11.2019թ. "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ն առանց հանձնման-ընդունման արձանագրության, առանց ուղեկցող փաստաթղթերի իրականացրել է հացի մատակարարումը, որը չի ընդունվել "Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ" ՀՈԱԿ-ի կողմից: "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ի կողմից բազմաթիվ անգամ խախտվել է պայմանագրի 1.1 կետը: "Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ" ՀՈԱԿ-ի և "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ի միջև 2019թ. հունվարի 08-ին կնքված "ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4" ծածկագրով պայմանագրի 8.11. կետով պայմանագիրը միակողմանի լուծվել է:

"Գնումների մասին" ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի "ա" ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ-ցության դադարեցմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը (466 հոդվածի 2-րդ կետ):

"Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ" ՀՈԱԿ-ի և "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ի միջև 2019թ. հունվարի 08-ին կնքված "ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4" ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1_օրից ավելի:

Հայտնում ենք, որ "ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4" ծածկագրով պայմանագրի մատակարարումները պետք է իրականացվեր Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզում:

“Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ն պայմանագրի կատարման փուլում բոլոր մատակարարումները իրականացրել է պայմանագրով սահմանված ժամկետներում և պայմանագրով սահմանված տեխնիկական-բնութագրին համապատասխան որակի:

Ս.թ. նոյեմբերի 18-ին մատակարարման մի մասը առաջացած տեխնիկական խնդիրների պատճառով “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ն չի կարողացել իրականացնել:

Այնուհետև, նոյեմբերի 19-ին մատակարարվել է հացը, որը ըստ Պատվիրատուի 19.11.2018թ. պայմանագրի միակողմանի լուծման գրության, չի ընդունվել, քանի որ հացի մատակարարումը 19.11.2019թ. “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ն իրականացրել է առանց հանձնման-ընդունման արձանագրության, առանց ուղեկցող փաստաթղթերի, ինչի պատճառովայն չի ընդունվել «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն փաստերի վրա, որ “Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ” ՀՈԱԿ-ի կողմից “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի հետ պայմանագիրը միակողմանի լուծվել է ոչ իրավաչափ՝ պայմանագրի կանոնների խախտմամբ, հետևյալ հիմնավորումների համաձայն՝

- *Նախ, Պատվիրատուի կողմից որպես “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորության խախտման փաստ ֆիքսվել, հաստավել է Պայմանագրի 1.1. կետի բազմակի խախտումը: Մինչդեռ պայմանագրի 1.1 կետի՝ պայմանագրի առարկան սահմանող կետի, համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Միևնույն ժամանակ, պայմանագրի 2.1.7.1-րդ կետը հստակ ամրագրում է, թե վաճառողը՝ “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ն ինչ պայմանագրային պարտավորություն ունի ստանձնած, այն է՝ մատակարարել պատշաճ որակի ապրանք և չխախտել մատակարարման ժամկետը ավելի, քան մեկ օրով: Ակնհայտ է, որ ըստ Պատվիրատուի պայմանագիրը միակողմանի լուծման գրության՝ “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ն չի խախտել տվյալ պայմանագրով ստանձնած պայմանագրային պարտավորություններ, քանի որ Պայմանագրի 1.1 կետը, որը իրբրև թե խախտել է ՍՊԸ-ն, հանդիսանում է ընդամենը պայմանագրի առարկան:*
- *Ըստ Պատվիրատուի 19.11.2019թ. պայմանագրի միակողմանի լուծման գրության՝ “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի կողմից բազմաթիվ անգամ խախտվել է պայմանագրի 1.1 կետը: “Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ” ՀՈԱԿ-ի և*

“Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի միջև 2019թ. հունվարի 08-ին կնքված “ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4” ծածկագրով պայմանագրի 8.11. կետով պայմանագիրը միակողմանի լուծվել է”: Մինչդեռ, պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին Պատվիրատուի գրությունից ակնհայտ է դառնում, որ պայմանագիրը միակողմանի լուծվել է ոչ իրավաչափ, քանի որ ընդհանրապես չեն պարունակում 2.1.7-րդ կետի և 2.1.7.1-րդ կետով պահանջված հիմքերը և ընդհանրապես անհասկանալի է, թե պայմանագիրը լուծվել է, քանի որ վաճառողը մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, թե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1_օրից ավելի: Գտնում ենք, որ նման դեպքում “Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ” ՀՈԱԿ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծումը իրավաչափ չէ և հակասում է պայմանագրի պահանջներին:

- *Եթե տեսականորեն ընդունենք, որ պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է պայմանագրի 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետի ուժով, այսինքն ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի, ապա անհրաժեշտ է, որ “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի կողմից հացի չմատակարարվեր մեկ օրից ավել: Ըստ պատվիրատուի կողմից տրամադրած տեղեկատվության՝ 18.11.2019թ. “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել հացի մատակարարումը: Իսկ 19.11.2019թ. “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի կողմից մատակարարված հացը չի ընդունվել “Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ” ՀՈԱԿ-ի կողմից, քանի որ բացակայել է հանձնման-ընդունման արձանագրությունը և այլ ուղեկցող փաստաթղթեր: Այսպիսով, որպեսզի պատվիրատուն կարողանար միակողմանի լուծել պայամանիրը , անհրաժեշտ էր, որպեսզի ֆիքսվեր, որ հացը չի մատակարարվել ավելի, քան մեկ օր: Միայն 18.11.2019թ. “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի կողմից հացի մատակարարում չիրականացնելը բավարար չէր պայմանագիրը լուծելու համար: Այդ նպատակով 19.11.2019թ. “Այգեվանի ալրաղաց” ՍՊԸ-ի կողմից մատակարարված հացը չի ընդունվել «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ»*

ՀՈԱԿ-ի կողմից այն հիմքով, որ բացակայել է հանձնման-ընդունման արձանագրությունը և այլ ուղեկցող փաստաթղթեր:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ պայմանագիրը հստակ սահմանում է այն բոլոր դեպքերը, երբ գնորդի կողմից մատակարարված ապրանքը կարող է չընդունվել և գնորդը իրավունք ունի հրաժարվել ընդունել մատակարարված ապրանքը, այն է.

2.1.2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, ապա գնորդը իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա գնորդը իրավունք ունի հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց:

2.1.4-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, ապա գնորդը իրավունք ունի իր ընտրությամ հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից:

Պայմանագրի վերոհիշյալ դրույթներից ուղղակիորեն հետևում է, որ գնորդը՝ "Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ" ՀՈԱԿ-ը, իրավունք չուներ հրաժարվել ընդունել 19.11.2019թ. մատակարաված ապրանքը այն հիմնավորմամբ, որ բացակայում է հանձնման-ընդունման արձանագրությունը, քանի որ ըստ պայմանագրի՝ գնորդը նման իրավասությամբ օժտված չէ:

Նման պայմաններում գտնում ենք, որ "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ին չի կարող վերագրվել մեկ օրից ավելի հաց չմատակարելու փաստը, քանզի հացը չի մատակարարվել միայն 18.11.2019թ.:

Գտնում ենք, որ նման դեպքում "Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ" ՀՈԱԿ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծումը իրավաչափ չէ և հակասում է պայմանագրի պահանջներին, իսկ "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել պայմանագրային պարտավորությունների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հանգեցնել Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելուն:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են հաշվի առնել ներկայացված փաստարը և փաստական հանգամանքները և «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

3. <u>ՍՑ-LO-2019/225 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի միջև 08.01.2019թ.-ին կնքվել է թիվ «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած յուրաքանչյուր աշխատանքային օր առավելագույնը 25 կգ:

Նույն հավելվածի համաձայն՝ մատակարարումը պետք է կատարվի ք. Արտաշատ Հր. Թովմասյան 13 հասցեով: Պատվիրատուն նախապես մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնում է մատակարարին մատակարարվող ապրանքի քանակի և ժամկետի մասին:

www.gnumner.am համացանցային կայքում 19.11.2019թ. հրապարակված թիվ «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի միջև 08.01.2019թ.-ին կնքվել է թիվ «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» ծածկագրով պայմանագիրը, ըստ որի «Այգեվանի ալրաղաց» ԱՊԸ-ն պարտավորվել է իրականացնել յուրաքանչյուր աշխատանքային օր սննդամթերքի /հացի/ մատակարարում: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 1 435 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի կատարման փուլում դիտվել են հացի մատակարարման ուշացման, հացի որակի

անհամապատասխանության բազմաթիվ խախտումներ, ուղեկցող փաստաթղթերի բացակայություն, որոնց կապակցությամբ բանավոր բազմաթիվ զգուշացումներ են արվել: 18.11.2019թ.-ին «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ն ընդհանրապես չի իրականացրել հացի մատակարարում, որի արդյունքում խաթարվել է մանկապարտեզի բնականոն աշխատանքը: 18.11.2019թ-ին «Այգեվանի ալրաղաց» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում պահանջելով պարզաբանում հացի չմատակարարման համար: 19.11.2019թ. «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ն առանց հանձման-ընդունման արձանագրության և ուղեկցող փաստաթղթի իրականացրել է հացի մատակարարում, որը չի ընդունվել «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից, կազմվել է արձանագրություն վեյահիշյալ խախտման վերաբերյալ: «Այգևանի ալրաղաց» ԱՊԸ-ն բազմաթիվ անգամ խախտել է պայմանագրի 1.1 կետը: «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Այգեվանի ալրաղաց» ՍՊԸ-ի միջև 08.01.2019թ կնքված «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» ծածկագրով պայմանագրի 8.11 կետով միակողմանի լուծել պայմանագիրը: Ի հայտ են եկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի ա) պարբերության հանգամանքներ:

4. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.11.2019թ. թիվ 26/26-1/19606-2019 գրությամբ «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի՝

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի միջև 08.01.2019թ.-ին կնքված թիվ «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» ծածկագրով պետական

գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած յուրաքանչյուր աշխատանքային օր առավելագույնը 25 կգ:

Նույն հավելվածի համաձայն՝ մատակարարումը պետք է կատարվի ք. Արտաշատ Հր. Թովմասյան 13 հասցեով: Պատվիրատուն նախապես մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնում է մատակարարին մատակարարվող ապրանքի քանակի և ժամկետի մասին:

www.gnumner.am համացանցային կայքում 19.11.2019թ. հրապարակված թիվ « ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի միջև 08.01.2019թ.-ին կնքվել է թիվ «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» ծածկագրով պայմանագիրը, ըստ որի «Այգեվանի ալրաղաց» ԱՊԸ-ն պարտավորվել է իրականացնել յուրաքանչյուր աշխատանքային օր սննդամթերքի /հացի/ մատակարարում: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 1 435 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի կատարման փուլում դիտվել են հացի մատակարարման ուշացման, հացի որակի անհամապատասխանության բազմաթիվ խախտումներ, ուղեկցող փաստաթղթերի բացակայություն, որոնց կապակցությամբ բանավոր բազմաթիվ զգուշացումներ են արվել: 18.11.2019թ.-ին «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ն ընդհանրապես չի իրականացրել հացի մատակարարում, որի արդյունքում խաթարվել է մանկապարտեզի բնականոն աշխատանքը: 18.11.2019թ-ին «Այգեվանի ալրաղաց» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում պահանջելով պարզաբանում հացի չմատակարարման համար: 19.11.2019թ. «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ն առանց հանձման-ընդունման արձանագրության և ուղեկցող փաստաթղթի իրականացրել է հացի մատակարարում, որը չի ընդունվել «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից, կազմվել է արձանագրություն վեյահիշյալ խախտման վերաբերյալ: «Այգևանի ալրաղաց» ԱՊԸ-ն բազմաթիվ անգամ խախտել է պայմանագրի 1.1 կետը: «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Այգեվանի ալրաղաց» ՍՊԸ-ի միջև 08.01.2019թ կնքված «ԱՐՏՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-19/01-4» ծածկագրով պայմանագրի 8.11 կետով միակողմանի լուծել պայմանագիրը: Ի հայտ են եկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի ա) պարբերության հանգամանքներ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, հաշվի առնելով 18.11.2019թ.-ին «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ի կողմից հացի մատակարարում չիրականացնելու և 19.11.2019թ.-ին Մասնակցի կողմից առանց հանձման-ընդունման արձանագրության և ուղեկցող փաստաթղթի մատակարարում իրականացնելու հանգամանքները, որը չի ընդունվել «Արտաշատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից, միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ հիմք ընդունելով Պայմանագրի 1.1 և 8.11 կետերի դրույթները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ նախ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցմամբ (այսուհետ՝ Ծանուցում) կիրառել է սխալ իրավական նորմ: Այն է՝ Պայմանագրի 1.1 կետը այն պարտավորությունն է, որը ստանձնել է մասնակիցը, և որի խախտման փաստի հանգամանքի առաջացմամբ է միայն հնարավոր լուծել կնքված պայմանագիրը, հիմք ընդունելով արդեն Պայմանագրի 2.1.7 կետով առկա դրույթները: Իսկ 8.11 կետը վերաբերում է ոչ թե Պայմանագրի լուծման հիմքին, այլ այն ընթացկարգին, թե ինչպիսի գործողությունների արդյունքում է Մասնակիցը համարվելու պատշաճ ծանուցված:

Երկրորդ. Պայմանագիրը ժամկետի խախտման հիմքով լուծելու համար, անհրաժեշտ է արձանագրել 1 օրից ավելի (այլ կերպ ասած՝ առնվազն 2 օր) ժամկետի խախտում, որը սույն դեպքում բացակայում է, քանի որ Մասնակցի կողմից 19.11.2019թ.-ին ապրանքի մատակարարման խոչընդոտն առաջացրել է հենց Պատվիրատուն՝ անհիմն կերպով չընդունելով ապրանքը: Այն դեպքում, երբ ապրանքը հանձնման-ընդունման ակտի բացակայության պայմաններում չընդունելու իրավունք, Պայմանագրով, Պատվիրատուին վերապահված չէ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ գործով որևէ վերաբերելի այլ ապացույց, առ այն, որ մասնակցի կողմից թույլ են տրվել Պայմանագրի ժամկետների խախտումներ, առկա չեն, իսկ ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից Բողոքներ քննող անձին տրամադրված հավելյալ նյութերին (ավտոմեքենայի լուսանկարներ, 26.11.2019թ.-ին ՀՀ Կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված թիվ 7069 գրություն), ապա հարկ եմ համարում ընդգծել, որ դրանք իրենց բնույթով, եթե նույնիսկ վերաբերում են «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին, չեն կարող հիմք հանդիսանալ և փաստել՝ Մասնակցի կողմից մատակարարման ժամկետների խախտումը:

Հատկապես այն դեպքում, երբ ՀՀ Կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին գրությունը ուղղվել է 21.11.2019թ.-ին՝ Պայմանագիրը 19.11.2019թ.-ին միակողմանի լուծելուց հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.11.2019թ. թիվ 26/26-1/19606-2019 գրությամբ «Այգևանի ալրաղաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/225 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**